ՔԱՂՎԱԾՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3_ից

(արտահերթ նիստը գումարվել է 2024 թ.-ի դեկտեմբերի 13-ին)

Նիստին մասնակցում էին կառավարման խորհրդի 11 անդամները: Նիստին մասնակցում էին «Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարիաննա Նավասարդյանը և վարչատնտեսական մասի համակարգող Կարինե Ստեփանյանը, «Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հ. Մարգարյանը և հաշվապահ Ռուզաննա Ամիրյանը, «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահ Հռիփսիմե Բաբուրյանը, «Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահ Ամալյա Սարգսյանը :

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ա. 2025թ. բյուջեի նախագիծ նախահաշվի քննարկում:
   բ. 2024 թ. ճշտված նախահաշվի քննարկում:

2. Ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի հաստատում (հաղորդող՝ Մ. Նավասարդյան):

3. Քննարկել ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը:

Լսեցին – 1. 1) 2025թ. բյուջեի նախահաշվի նախագծի քննարկում:

2) 2024 թ. ճշտված նախահաշվի քննարկում:

ա/ «Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Կարինե Ստեփանյանը ներկայացրեց, որ արդեն կազմվել է հաստատության 2025թ. նախահաշվի նախագիծը, որտեղ հաշվի են առնվել սուբսիդավորման պայմանագրերը, լրավճարներն ու հավելավճարների գումարները: Նշեց, թե ինչ ծրագրերով և ինչպես է բաշխվել գումարը (Նախահաշվի նախագիծը կցվում է): Նաև նշվեց, որ տնտեսված գումարները նպատակաուղղվելու են աշխատակիցների պարգևավճարների համար նաև պարգևավճար հատկացնել դպրոցի տնօրենին և վարչատնտեսական համակարգողին՝ 1-ամսյա վճարի չափով:

«Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը ներկայացրեց կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների /ԿԱՊԿ/ կազմը:

բ/ «Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահ Ռուզաննա Ամիրյանը ներկայացրեց, որ հաշվի առնելով 2023թ. 79-Ն որոշումը և 2024թ. 11 ամիսների ֆինանսավորումը՝ նախատեսվել է դպրոցի սուբսիդավորման չափը՝ ներառելով կամավոր ատեստավորման և ԲՏՀՄ-ԻՆ հատկացված գումարները: Ներկայացրեց հիմնական ծախսեր՝ էներգետիկ ծառայությունների, կոմունալ այլ ծառայությունների, մասնագիտական ծառայությունների և այլն: Նշեց նաև, որ դպրոցն ունի չինական ծրագիր, որը նախատեսված է Չինաստանի մշակույթի ուսումնասիրման և կենտրոնի պահպանման համար: Այս ծրագրով նախատեսված ծախսերը ևս նշվեցին (Նախահաշվի նախագիծը կցվում է):

Ներկայացվեց նաև 2024թ. ճշտված նախահաշիվը հոդված առ հոդված, նշեց նաև որ տնտեսումների հաշվին նախատեսված է պարգևավճարներ տալ միայն աշխատակիցներին (Ճշտված նախահաշիվը կցվում է):

գ/ «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ –ի հաշվապահ Հռիփսիմե Բաբուրյանը ներկայացրեց դպրոցի տարեկան ծախսերի նախահաշվի նախագիծը՝ իր համապատասխան հոդվածներով (Նախահաշվի նախագիծը կցվում է): Ներկայացրեց նաև 2024 թ. ճշտված նախահաշիվը: Նշվեցին այն հոդվածները, որոնցում կատարվել են փոփոխություններ՝ աշխատավարձի հոդված, էներգետիկ ծառայությունների, մասնագիտական ծառայությունների, աղբահանության նախորդ տարիների չվճարված գումարը և այլն: Ներկայացրեց նաև, որ տնտեսած գումարների հաշվին նախատեսվել է նաև պարգևատրում վճարել աշխատակիցներին նաև պարգևավճար հատկացնել դպրոցի տնօրենին 1-ամսյա վճարի չափով:

Հաղորդեց նաև, որ համաձայն ՀՀ կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի N 2323-Ն որոշման՝ կազմակերպության հաշվից պետական բյուջե հետ է փոխանցվել ազատ մնացորդը (Ճշտված նախահաշիվը կցվում է):

դ/ «Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց » ՊՈԱԿ-Ի

հաշվապահ ներկայացրեց դպրոցի 2025թ. բյուջեի նախագծի հիմնական հոդվածները և դրանցով նախատեսված ծախսերը (Նախահաշվի նախագիծը կցվում է): Նշեց նաև 2024թ. ճշտված նախահաշվի փոփոխությունները (Ճշտված նախահաշիվը կցվում է): Նշվեց, որ ունեն տնտեսված գումարներ, որը նպատակաուղղվել է «Պարգևատրումների, դրամական խրախուսումների և հատուկ վճարներ» հոդվածի, նաև պարգևավճար հատկացնել դպրոցի տնօրենին 1-ամսյա վճարի չափով:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով լսածը և քննարկումները՝ կառավարման խորհուրդը

Որոշում է

1. Հավանություն տալ «Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2025 թ. նախահաշվի նախագծերին:

2. Հավանություն տալ «Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի Ա.Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի 2024 թ. ճշտված նախահաշիվներին:

3. Առաջարկել ՀՀ ԿԳՄՍ նախարարին տնտեսված գումարների հաշվին վճարել պարգևավճար.
«Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենին և վարչատնտեսական համակարգողին
«Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ –ի տնօրենին
«Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի տնօրենին

Լսեցին – 2. Ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի հաստատման մասին (հաղորդող՝ Մ. Նավասարդյան):

«Երևանի Տ. Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Մարիաննա Նավասարդյանը ներկայացրեց, որ ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի մեջ կատարվել են փոփոխություններ՝ համաձայն ԿԳՄՍ նախարարի 2024թ. հունիսի 17-ի N 49-Ն հրամանի: Նա նշեց փոփոխությունները և առաջարկեց խորհրդին հաստատել վերջնական փոփոխությունները (հրամանը կցվում է):

Հիմք ընդունելով լսածը՝ կառավարման խորհուրդը

Որոշում է

1. Հաստատել ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգի մեջ կատարված փոփոխությունները՝ համապատասխան 4 դպրոցների:

Լսեցին – 3. «Երևանի Տ.Շնչենկոյի անվան թիվ 42 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը /զեկուցող՝ տնօրեն/,

«Երևանի Ա. Մարգարյանի անվան թիվ 29 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը /զեկուցող՝ տնօրեն/,

«Երևանի թիվ 2 ավագ դպրոց» ՊՈԱԿ –ի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը /զեկուցող՝ տնօրեն/,

«Երևանի Խ. Դաշտենցի անվան թիվ 114 ավագ դպրոց » ՊՈԱԿ-ի ուսումնադաստիարակչական գործունեության մասին հաշվետվությունը /զեկուցող՝ տնօրեն/:

Կառավարման խորհրդի նախագահ՝ Ն. Այվազյան

քարտուղար՝ Շ. Գալստյան